
ՀԱՍԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«ՉԵՍ ՈՒ ՉԵՍ ԿԸՐՆԱ ԽԱՂԱՍ» ՊԱՐԵՐԳԸ ՆԱԽԱՍՈՒՄՆԱԿԱՆ ԾԻՍԱԿԱՐԳՈՒՄ

ՇԱՄԱՍՅԱՆ Ն. Ա.

Պատմական Հայաստանի մի շարք շրջաններում (Տարոն, Վասպուրական, Չորրորդ Հայք, Համշեն և այլն) տարածված է եղել նախքան նշանադրությունը կատարվող՝ նախամուսնական ծեսերի մեջ ներառվող արարողություն, որը հանդիսացել է զննում՝ տղայի և նրա ընտանիքի ընտրած աղջկան պարտադիր ստուգելու ծիսականացված գործողությունների փունջ:

Աղջիկ ստուգելը փակ, գաղտնի արարողություն էր, որին կարող էին մասնակցել միայն կանայք: Այն կատարվում էր տվյալ շրջանի՝ այդ գործում ճանաչված և փորձառու կանանց պարտադիր ներկայությամբ: Հիմնականում նրանք լինում էին միջին տարիքի և ծեր: Այդ արարողությանը տղամարդկանց ներկայությունը խստիվ արգելվում էր: Տարոնում այդ արարողությանը ներկա չէին նաև տղայի և աղջկա բարեկամները, հատկապես մայրերը¹:

Արարողությունը քաղաքային միջավայրում տեղի էր ունենում հասարակական բաղնիքում, իսկ գյուղերում՝ վստահելի կանանցից մեկի տան օդայում: Եվդոկիայում հարսնացու աղջկան պետք է տեսնեին բաղնիքում՝ նրա ֆիզիկական կազմվածքը մոտիկից ուսումնասիրելու համար²: Տրապիզոնում, տեղական բարքերի համաձայն, բարոյական ընտանիքից սերվող աղջկան անպայման տանում էին հասարակական բաղնիք՝ տեսնելու համար՝ ինչ թերություն ունի կամ չունի, արժե՞ արդյոք նրան հարս բերել, արդյո՞ք հագուստների տակ թաքնված թերություն կա³: Ապագա հարսին անհրաժեշտ էր բաղնիքում տեսնել նաև իր բոլոր տեսակի շնորհքներով՝ երգով, պարով, վարվելաձևով, քաղաքավարությամբ: Բացի այդ, կանանց բաղնիքը՝ հատկապես քաղաքային միջավայրում, հիանալի ժամանցի վայր էր շաբաթ-կիրակի օրերին (թեյի կամ սուրճի շուրջ երգել-պարելու, իրենց շնորհքը ցուցադրելու համար), որտեղ հավաքվում էին կանայք ոչ միայն շաբաթվա ընթացքում կատարված կարևոր իրադարձությունները քննարկելու, այլև իրենց հասուն աղջիկներին ներկայացնելու, ոմանք էլ իրենց տղայի համար աղջիկ ընտրելու նպատակով⁴: Այսպես, Տրապիզոնում կային արևելյան բաղնիքներ, որտեղ ջուրն առատ ու մաքուր էր, և ծանոթների հետ

¹ Թարվերդյան Գ., Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 1013, գ. - 7, ց. - 1336:

² Ալպոյաճեան Ա., Պատմություն Եւդոկիոյ, Գահիրէ, 1952, էջ 1500:

³ Թողաքյան Բ., Համշենահայերը ու պոնտահայերը, թղթ. 46/1, Հնագիտության և ազգագրության ինստիտուտի արխիվ (այսուհետև՝ ՀԱԻԱ), էջ 109:

⁴ Շամամյան Ն., Դաշտային ազգագրական նյութեր (այսուհետև՝ ԴԱՆ), ՀՀ Շիրակի մարզ, ք. Գյումրի, բանասաց՝ Արփիկ Խաչատրյան, 1929 թ.:

տեսակցելու, նոր ծանոթությունների շատ առիթներ էին ստեղծվում: Համապատասխան վճարի դիմաց կարող էին ժամեր անցկացնել բաղնիքում: Ահա այստեղ է, որ ուշադիր քննում են ապագա հարսին՝ հասակը, մարմնի բարեկեցությունը, թերությունները, առավելությունները: Եթե ամեն ձևով շնորհալի աղջիկ էր լինում, ապա բաղնիքի դռան առջև նրա ճակատը համբուրում էին ապագա սկեսուրը և ազգականները, որից հետո նշանդրերի համաձայնություն էին տալիս⁵: Բաղնիք գնալու արարողությունից հետո տեղի էր ունենում նշանդրերը: Այս ծեսը արտացոլվել է նաև Համո Բեկնազարյանի «Պեպո» գեղարվեստական ֆիլմում, որտեղ առանձնահատուկ ազգագրական արժեք է բաղնիքում մի խումբ կանանց կողմից Կեկելի բարեմասությունների ստուգման տեսարանը⁶: Հարսնացու ընտրվող աղջկան մանրակրկիտ ստուգելու արարողությունը կատարվում էր միայն ծնողների երկուստեք համաձայնությամբ:

Կանանց հանրային բաղնիքում էր կատարվում արարողությանը բնորոշ պարերգը՝ «Չեմ ու չեմ կըրնա խաղամ», որը մասնակի, ոչ ամբողջական բանաստեղծական տեքստով, այն է՝ երաժշտական տեքստի ձևով և առանց ծեսի նկարագրության առկա է Կոմիտասի⁷, Սպ. Մելիքյանի⁸, Մ. Թումաճանի⁹, Պ. Ալահայտյանի¹⁰ գրառումներում: Երգը հանդիպում է նաև հայկական ազգագրական և բանահյուսական նյութերի մի շարք ժողովածուներում և արխիվային նյութերում՝ առանց ծեսի հիշատակության և անգամ առանց նոտագրության, ինչպես բանահավաք-ազգագրագետներ Ա. Սոլաքյանի¹¹, Թ. Գևորգյանի¹² գրառումներում է:

Ծեսի նկարագրությունը և երգը գրանցել ենք Աշտարակի Ագարակ գյուղում. Ռուբիկ Կարապետյանը երգեց¹³ և մասնակիորեն պատմեց տվյալ ծեսի մասին: Ըստ Կարապետյանի՝ Ագարակ գյուղում կար հանրային բաղնիք, և հարս ընտրվող աղջկան անպայման պետք է ստուգեին¹⁴:

Երգի տարբերակների երաժշտական տեքստերը միմյանցից տարբերվում են. հանդիպում են և՛ արագ, և՛ դանդաղ տեմպով: «Չեմ ու չեմ կըրնա խաղամ» երգը

⁵ Թողաքյան Բ., նշվ. աշխ., էջ 109:

⁶ Ֆիլմը նկարահանվել է Հայֆիլմ կինոստուդիայում 1935 թ.: Կարելի է նաև հիշատակել Յու. Երզնկյանի «Խաթաբալա» ֆիլմը, որում Մարգրիտին ամուսնացնելու նպատակով երկար հագուստի տակից քողարկվում էին մարմնի թերությունները: Այս վերջինը բաղնիքի արարողության հակառակ դրսևորումն է:

⁷ Կոմիտաս, Հայ ժողովրդական երգեր, Երկ. ժող., հ. 11, էջ 72:

⁸ Սպ. Մելիքյան և Գ. Գարդաշյան, Վանա ժողովրդական երգեր, պրակ յերկրորդ, Յեր., 1928, էջ 6, N 66:

⁹ Թումաճան Մ., Հայրենի երգ ու բան., հ. 1, Ե., 1972, էջ 104:

¹⁰ Ալահայտյան Պ., Բալուի եւ տարածաշրջանի երաժշտական ազգագրական հաւաքածոյ, Կլենտէլ, Գալիֆոռնիա, 2009, էջ 105:

¹¹ Սոլաքյան Ա., Վանա բանահյուսություն (Ազգագրական հանդես, հ. 19 Թիֆլիս, 1910, էջ 108):

¹² Գևորգյան Թ., Խոտորջուրի ազգագրություն, ՀԱԲԱ, էջ 25:

¹³ Բանասացը և գյուղի բնակչության մեծ մասը ծագումով վասպուրականցի են՝ Ռշտունյաց գավառի Նոր Շեն գյուղից:

¹⁴ Շամաժյան Ն., ՀՀ Արագածոտնի մարզ, գ. Ագարակ, ԴԱՆ, 2013:

բեմականացմամբ եղել է Թաթուլ Ալթունյանի երգի-պարի անսամբլի երգացանկում, մենակատարներն էին Արև Բաղդասարյանը և Լուսիկ Քոչյանը:

Այս ծեսն ամբողջականորեն՝ իր մանրամասն նկարագրություններով և պարերգով, գրառել է արմատներով մշեցի բանասաց աշուղ Վերդին (Գեղամ Թարվերդյանը), որը հիմք է տալիս «**Չեմ ու չեմ կրրնա խաղամ**» պարերգը համարել հարսնացուին ստուգելու նախամուսնական արարողություն:

Այս պարերգի ներքո հարսնացուն պարտավոր էր աստիճանաբար հանել զարդերն ու հագուստը՝ ընդհուպ ամբողջապես մերկանալը: Հագուստի յուրաքանչյուր մաս հանելն ուղեկցվում էր հարսնացուի մենապարով, իսկ մասնակիցների մի մասը հետևում էր աղջկա պարին, թե նա ինչպես է մարմնի մասերը շարժում: Չայնային լավ տվյալներով երգասաց կանայք երգում էին՝ ապահովելով երաժշտական ուղեկցությունը:

Արարողությունը սկսվում է հետևյալ կերպ: Կանանց խումբը շրջանաձև դիրք էր գրավում, իսկ շրջանի կենտրոնում հանդես էր գալիս աղջիկը: Նախ՝ կանայք երգում էին մեկ քառատող՝ դիմելով աղջկան, որտեղ նշվում էր հագուստի այն մասը, որը պետք է հաներ հարսնացուն, այնուհետև աղջիկը պարելով և երգելով պատասխանում էր կանանց և հանում հագուստի համապատասխան մասը:

Երգչախումբ – Դե յեկ, յեկ, յեկ, յեկ կայնի խաղա,
Ախչի քո պար յեկ կայնի խաղա,
Արևածամ անուշ աղջիկ,
Հարե աղջիկ, յեկ կայնի խաղա:

Երգը դադարեցնելուց հետո խումբը սկսում էր «Նանայ-նայ-նայ» երգել և ծափահարել, որի ժամանակ աղջիկը մի շրջան պարում էր, ապա դադարեցնում էր պարն ու երգով պատասխանում երգչախմբին.

Չեմ, չեմ, չեմ, չեմ կանա խաղա,
Կըլխիս մախչի¹⁵ ծանրութենեն,
Ի՞նչ անեմ, որ չեմ կանա խաղա:

Այնուհետև աղջիկը պարում էր երգչախմբի երգեցողության ներքո:

Երգչախումբ– Հանե մախչետ տու, տիր դըհան,
Անուշ աղջիկ տու ջանե ջան,
Ափռշում¹⁶ մազ, ի՞նչ կանի,

¹⁵ Մախչա՝ կնոջ ճակատի արծաթյա զարդ (Վասպուրական, Տուրուբերան), Փափազյան Հ., Հայկական տարագ. Ե., 2002, էջ 137:

¹⁶ Մետաքսե մազ:

Յելի, յելի, յել կայնի խաղա:

Աղջիկը գլխի մախչեն հանում և գցում էր մի կողմ և կանանց նանայ-նայ-նայ-ի և ծափերի ներքո առավել եռանդով սկսում պարել, բայց մի քանի պտույտ պարելուց հետո դադարեցնում էր պարը և երգելով պատասխանում.

Չեմ, չեմ, չեմ, չեմ կանա խաղա,
Վըրիս **դալմի**¹⁷ ծանրութենեն,
Ինչ անեմ որ չեմ կանա խաղա:

Երգչախումբ – **Դալմետ** ի խան տի պատուխան,
Հարե աղջիկ տու ջանե, ջան,
Քո գյուլ գյառդան (պարանոց) ինչ կանի դալման,
Յելի, յելի, յել կայնի խաղա:

Երգատեքստից ակնհայտ է հարս տարվող աղջկա գանգատը՝ ուղղված մասնակից կանանց: Անմիջապես աղջիկը հանում է դալման ու գցում մի կողմ և շարունակում նույն տեմպով պարել:

Աղջիկ – Չեմ, չեմ, չեմ, չեմ կանա խաղա,
Խաս **գըպունիս**¹⁸ ծանրութենեն,
Ինչ անեմ որ չեմ կանա խաղա:

Երգչախումբ – Ջըպունտ խան, թաբլէ մէ յան,
Էտու պետք չունի քյո յառդան,
Հարե աղջիկ տու ջանե ջան,
Յելի, յելի, յել կայնի խաղա:

Աղջիկ – Չեմ, չեմ, չեմ, չեմ կանա խաղա
Զառ թուլումիս ծանրութենեն,
Ինչ անեմ որ չեմ կանա խաղա:

Երգչախումբ – Թուլումդ ի խան թալ ի դիան,
Թուլումդ ինչ կանի քո գյառդան,
Յելի, յելի, յել կայնի խաղա:

Աղջիկ – Չեմ, չեմ, չեմ, չեմ կանա խաղա,
Խաս իշլիկիս¹⁹ ծանրութենեն,
Ինչ անեմ որ չեմ կանա խաղա:

¹⁷ **Դալմա**՝ կնոջ կերպասյա երկար, տաք վերնագգեստ (Վասպուրական) (Փափագյան Հ., նշվ աշխ., էջ 133):

¹⁸ **Զպուն**՝ կնոջ վերնագգեստ (Վասպուրական, Տուրուբերան)(նույն տեղում):

¹⁹ **Իշլիկ**՝ կարճ վերնագգեստ (Վասպուրական) (նույն տեղում, էջ 134):

Երգչախումբ– Յեալակտ²⁰ խան տի պատուխան,

Յեալակտ ինչ կանի քո գյուլ ջան,

Անուշ աղջիկ տու աննման,

Յել ջանս, յել կայնի խաղա:

Աղջիկ – Չեմ, չեմ, չեմ, չեմ կանա խաղա,

Ջառ վարտիկիս ծանրութենեն,

Ինչ անեմ որ չեմ կանա խաղա:

Երգչախումբ – Սըբ Տիրամեր որ գետ չուներ,

Էլը կուս էր, էլը լուս էր,

Քանդի խանգուց բացի քո²¹...

Ռինտ ու սերսուփ ել կայնի խաղա:

Աղջիկը հանում է վերջին հագուստը՝ վարտիքը, և ամբողջովին մերկ շարունակում է պարել՝ խմբի երգեցողության ներքո.

Երգչախումբ – Ջուխտ եղունակ սրտիտ վրա,

Նռան խատիկ պոնաճ պերեն,

Վարդը զամբեդ քո անուշ ջան,

Շիր ու շիշմար յել կայնի խաղա:

Այսպես, մասնակիցների պահանջով աղջիկը հետևողականորեն հանում է խաս զրպունը, զառ թուլումը, խաս իշլիկը, խաս յեալակը, շապիկը և վարտիքը: Երբ ամբողջովին մերկ շարունակում է պարել խմբի երգեցողության ներքո, խմբից՝ ամենատարեցը՝ այդ գործում փորձառու կինը, մոտենում է աղջկան. վերջինս դադարեցնում է պարը: Տարեց կինը սկսում է ստուգել աղջկա մարմինը, իսկ երգչախումբը երգով դիմում է այդ կնոջը.

Մարան քուրիկ, Ասվաճ սիրես,

Լուս աղջկա թները վերց:

Կինը բարձրացնում է աղջկա թները և հոտ քաշում: Ստուգելուց հետո երգով պատասխանում է.

Մարան – Ուխաաաաա, անուշ, մըռնեմ ջանիտ,

Բահար բանֆաշի հոտ կուգա:

Երգչախումբ – Մարան քուրիկ, Ասվաճ սիրես,

Լուս աղջկա ծըծվերը տես:

²⁰ **Ելակ**՝ կնոջ անթև վերնագգեստ:

²¹ Այստեղ գրառողը բաց է թողել տվյալ բառը և այն միջակետերով փոխարինել:

Մարան – Ուխաաաաա, ազիզ մեռնեմ ծրծվերիտ,
Լըմանի անուշիտոտ շամամ:

Երգչախումբ – Մարան քուրիկ, Ասված սիրես,
Լուս աղջկա ... տես:

Մարան – Ուխաաաաա, անուշ մեռնեմ...²²,
Քափուր վարդի մը խոտ կուգա:

Հարսնացուին լիարժեք մաքուր և բարեձև տեսնելով՝ համբուրում էին նրան և գեղեցիկ բարեմադրանքներ հղում: Նախ՝ վերցնում էին աղջկա շապիկը, և առաջինը, որպես կանոն, համբուրում էր փեսայի քույրը, ապա մյուս կանայք: Հագուստ հագցնելը նույնպես ուղեկցվում էր երգով:

Երգչախումբ – Ռինտ սերսուփ անուշ խարսիկ,
Արե խաբցում քո լուս շապիկ:

Այնուհետև խումբը ոտքի էր կանգնում և ծափահարում երգելով:

Երգչախումբ – Այ շընխավոր, շընխավոր,
Ասված պախի բախտավոր:

Կանայք իրենց հետ բերած էին լինում գինի կամ շարբաթ, որը լցնում էին մի մեծ գավաթի մեջ, առաջինը աղջկան հրամցնում, ապա մյուսները մի-մի կում խմում էին նույն գավաթից: Գինու շշի տակ մի քիչ գինի էին թողնում, որպեսզի ստուգող կինը քսեր աղջկա դեմքին:

Մարան – Ախ, խմեցի քաղցրանայի,
Շարբաթի մըր ազիզ խարս:

Այսպիսով, ավարտվում էր արարողությունը, և վերջում աղջիկը համբուրում էր մեծահասակների ձեռքը, իսկ երիտասարդ կանանց՝ ձախ քունքը²³: Այս արարողությունից հետո էր միայն թույլատրվում նշանդրեքի արարողությունը կատարել: Պատահում էր նաև՝ աղջկա վրա արատներ էին հայտնաբերում, օրինակ՝ ցան, քոս, վերքեր, սպիներ, բերանից, ոտքերից, շեքերից հոտ, մազոտ ու սև մարմին, կախված ստինքներ. նման դեպքերում կանանց խումբը աղջկան հավաքել էր տալիս շորերը և բացասական պատասխան ուղարկում աղջիկ ուզողների ընտանիքին:

Այսպիսով, հայոց մեջ նախամուսնական ծիսաշարում առկա՝ պարի և երգի ուղեկցությամբ, հարսնացու աղջկան ստուգելու արարողության մեջ կարևորվում էին

²² Այստեղ նույնպես բանահավաքը բառն ամբողջությամբ փոխարինել է բազմակետերով:

²³ Տվյալ նյութում գրանցված է միայն շապիկը հագցնելը: Թե ինչ և ինչպես էին հագցնում շապիկից հետո, որն է նյութ չկա:

հարսնացուի ոչ միայն արտաքին տվյալները ստուգելը, այլև շարժումներ, հատկապես աղջկա մենապարի ընթացքում: Քանի որ պարելու ժամանակ առավել նկատելի են դառնում պարողի՝ ոտքերի և ձեռքերի թերություններն ու առավելությունները, ստուգման արարողության մեջ պարը մեծ նշանակություն է ստանում:

ТАНЦЕВАЛЬНАЯ ПЕСНЯ «НЕ МОГУ ПЛЯСАТЬ» В ДОБРАЧНОЙ ЦЕРЕМОНИИ

ШАМАМЯН Н. А.

Резюме

Согласно бытовавшим народным традициям, вплоть до середины XX в. у армян принято было устраивать смотрины невесты. Причем эта процедура сопровождалась танцами и, в частности, сольным танцем избранницы, распеванием народных песен-частушек в вопросно-ответной форме.

Мужчины не имели права присутствовать на этой церемонии. В городской среде данный ритуал проводился в общественной бане, а в деревнях, если не было бани, он проходил в одном из помещений дома женщин, пользующихся доверием родственников жениха. Помимо сказанного, один из ритуалов добрачной песни-пляски, сопровождающейся танцевальной песней «Не могу плясать», заключался в том, чтобы удостовериться в отсутствии физических изъянов у невесты, а также убедиться в ее полноценных умственных способностях.

THE DANCE SONG “I CAN’T DANCE” IN PREMARITAL RITE

N. SHAMAMYAN

Abstract

According to the folk traditions, it was common to view the bride before marriage among Armenians until the mid-20th century. This procedure was accompanied with dances and, in particular, solo dance of the chosen one, singing of folk songs - chastushkas in question-answer form.

The men were not allowed to be present at that ceremony. In the town environment this ritual was carried out in the public bath-house, and in the villages, if there was no bath-house, it was carried out in one of the rooms of the women, who enjoyed confidence of bridegroom’s relatives. Besides that, one of the rituals of premarital song-dance was accompanied by the song “I Can’t Dance”. It was aimed to make sure of the absence of bride’s physical defects.